



## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՄՅՈՒ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔԻ ՎԱՐԺԱՐԱՆԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(19-րդ դար)

19-րդ դարի հայ մշակույթի և մասնավորապես կրթության ասպարեզում կարևոր դեր էին խաղում վաճական դպրոցները: Արևմտահայության կյանքում առանձնահատուկ նշանակություն ունեին Կարազի, Դպրեվանքի (Արմաշի Ս. Աստվածածին վաճրի դպրոց), Մշո Ս. Առաքելոց, Կեսարիայի Ս. Կարապետ վաճրերի և ուրիշ վաճական հաստատություններում գործող կրթօջախները: Տարոն աշխարհում առանձնանում էր Մշո Ս. Կարապետ վաճրի դպրոցը: Վաճրը գտնվում էր Մուշ քաղաքի հյուսիս-արևմուտքը, Քարքեւ լեռան լանջին, և տաշին վաճառքայր Գլափի անոնով հետազայում կոչվել է Գլակա վաճր: Այն անվանվել է նաև Խճանակյան՝ ինը աղյուրների մոտ կառուցված լինելու պատճառով: Դպրերի ընթացքում այնունիշ թելմանավոր գործունեություն են ծավալել աշքի ընկնող նոզուրականներ, կրթության ասպարեզի գործիչներ:

Վաճրի կրթական գործունեությունը մեծ թափ ու նշանակություն է ստանում 19-րդ դարում, քանզի թուլացել էր Մշո Ս. Թարգմանչաց և Բաղեշի Ամրոցուու կրթօջախների գործունեությունը և տարածաշրջանի կրթական կենտրոնի համբավը աստիճանաբար անցնում էր Ս. Կարապետ վաճրին: Պահապանելով միջնադարի կրթադաստիարակչական ավանդույթները, այն միաժամանակ դարի երկրորդ կեսին հարստանում է հայ իրականության մեջ արմատավորվող կրթական, մանկավարժական նոր սկզբունքներով: Այնուհետեւ, դպրակզբին դեռևս վաճրի դպրոցն իր կրթության բովանդակությամբ աշքի չէր ընկնում, և տիրապետողը կրթության և

դաստիարակության ավանդական ձևն էր: Այդ մասին Կ. Պոլսի «Արևելք» թերթը գրում է: «Այն ատենահի ընթերցանությունը եկեղեցական ուսմանց շրջանակնեն դուրս չեր ելլեր... Դասարան կամ դասակարգություն ըսպած բանը չկար... Վարժապետը՝ ծալապատիկ հատած իր բոլորտիքն ունենալով հոգեառ ֆալախան... կշոգեցներ զանոնք (աշակերտներին - Վ. Կ.) և մեկիկ մեկիկ կլսեր դասերը»<sup>1</sup>: Սովորողները վարժվում էին Սահմոսի, Ժամագործի, Նարեկի, Ավետարանի ընթերցանության մեջ, սովորում էին շարականներ, այլ կերպ ասած՝ «Ժամի վերաբերյալ բաները կտվորեին»:

Ուսման այս ծրագիրը և դասավանդման եղանակը շարունակվել են մինչև դարի 40-ական թվականները: Թերևս բացառություն են կազմում Հովհաննես Վարդապետ Պոկլանցու և Հակոբ Թոփուլյանի ուսուցչության տարիները (1820-1832 թթ.), երբ ուսման ավանդական ծրագրում կատարվում է նորամուծություն: Հովհ. Պոկլանցին, որ «այս կողմերը հայկարանի և քերականագետի հոչակ» ուներ, ընթերցանությունից բացի իր սաներին սովորեցնում է գրաբարի քերականություն և «քիչ մըն ալ ուսիսն կամ արվեստ համարակալության»<sup>2</sup>: Նրանցից հետո դպրոցը, սակայն, մի որոշ ժամանակ ետքներաց է ապրում:

Դպրոցի աշխատանքներում կրկին որոշ թարմություն է մտնում Կարապետ Զաքարյանի շնորհիվ, որը բավականին գրագետ անձնավորություն էր և միաժամանակ վարում էր Առաջնորդարանի գրագրի պաշտոնը: Եվ, ընդհանրապես, Ս. Կարապետ վաճրի դպրոցի առաջնորդ մկանում է 40-ական թվականների վերջերից և 50-ականի սկզբներից: Բարեկարգվում են ինչպես ուսումնական ծրագրերը, այնպես էլ դպրոցական շենքի պայմանները: Կարապետ վարժապետը սովորողներին բաժանում է կարգերի՝ հաշվի առնելով նրանց տարիքը և գիտելիքները, իսկ առավել առաջադեմ աշակերտներին սովորեցնում է քերականություն և «ուսիսմ-համարակալություն». բան մը, որ դադրած էր Պոկլանցին ու Թոփուլյան (Հակոբ Թոփուլյան - Վ. Կ.) վերը»<sup>3</sup>:

Դպրոցի կյանքում երևությ էր ժամանակի նշանավոր մտավորական, մանկավարժ Ֆիզիկա Պողոսի (Պ. Պետրոսյան) կարճատև դասավանդությունը: Վերջինս Ս. Կարապետ վաճրի վաճառքայի Զաքարիա Ցարոնացու (1846-1853 թթ.) և վաճառքական փոխանորդ Կարապետ վարդապետ Կեսարացու հրավերով վաճր է գալիս 1852 թ. և դասավանդում մինչև 1853 թվականը: Երկրորդ անգամ նա վաճր է գալիս 1854 թ., սակայն քիչ ժամանակ անց՝ հեռանում: Ֆիզիկա Պողոսը փիլիսոփայի, հմուտ բնագետի համբավ ուներ. դասավանդել էր Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Եղուաղեմի դպրոցներում: Գլուխ Ս. Կարապետ վաճր՝ փորձառու մանկավարժն անմիջապես նկատում է դպրոցի խոնուկ վիճակը: Նա կանոնավորում է դասախությունները և «վարժարանը ենթարկում կարգ ու կանոնի»: Բարեփոխումները և ուսումնական գործի կազմակերպման նոր ձևերը, որոնք արդեն տեղ էին գտել Կ. Պոլսի, Զմյուռնիայի կրթական միջավայրում, թարմ շունչ են հաղորդում վաճրի

<sup>1</sup> «Արևելք», 1902 թ., հունիս 21:

<sup>2</sup> Նույն տեղ, հունիս 22:

<sup>3</sup> Նույն տեղ:

դպրոցին և միաժամանակ օրինակ դառնում որոշ ուսուցիչների համար: Այսպես Կարապետ Զաքարյանը «կարճ միջոցին մեջ շատ բան կտվի ֆիզիզալին, մանավանդ դասախոսությանց մոր նղանակներ»<sup>4</sup>: Դպրոցում օգտագործվում են Մ. Չամչյանի թերականության, ճարտասանության դասագրքերը, ուսուցանվում գրարդից աշխարհաբար թարգմանությունն, թվարկանություն և այլն: Ֆիզիկա Պողոսի արդյունավետ գործունության մասին հետազայտում նշում էր նաև Գ. Մրգանձոյանցը<sup>5</sup>: «Նրամուծությունների շնորհիվ զգայիրն արեկավում է դպրոցի ուսումնական վիճակը, անում դպրոցի հեղինակությունը, որի շնորհիվ այնուղիւ սպառելու էին գալիս նաև հեռու վայրերից»:

Հիսումական թվականներին բարեկավում են նաև դպրոցի շնմբային պայմանները: 1855 թ. ավարտվում է նոր դպրոցական շնմբի շնմարարությունը, որի շնորհիվ աշակերտներն ազատվում են նախակին ամնարմար շինությունից: Շնորհած շինության մեջ առանձնացվում են ուսումնական մասը, Անշարանը և թանգարանը: Արդյունավետ էր նաև այդ շրջանի դպրոցի հունձքը: Օրշանավարտներից շատերը դառնում են ժամանակի համար աչքի ընկնող հոգևորականներ և ուսուցիչներ: Դրանց թվում էին հետազայտում Ս. Կարապետ վանքի վաճարայր Մամբրի և պահպանը, Հովհաննես և պահպանը, Մշո Առաջնորդարանի և Ս. Կարապետի փոխանորդ Խորեն Վարդապետ Շահնազարյանը, Ս. Դանիել վանքի վաճարայր Ղազար Վարդապետը, Հովհաննես Վարդապետ Բագրատունին և ուրիշներ:

Ս. Կարապետ վանքի դպրոցի հետազա առաջընթացը և հոչակը, սակայն, կապված էր ժամանակի հայտնի եկեղեցական, հասարակական և լուսավորական գործիչ Մ'կրտիչ Խորիմյանի անվան հետ, որը 1862 թ. Կ. Պոլսի Պատրիարքարանի կողմից կարգվում է Տարոնի հոգևոր առաջնորդ և Ս. Կարապետ վանքի վաճարայր: Մ'հն այդ, Խորիմյանն աչքի էր ընկել Վասպորականում ծավալած լուսավորական գործունեությամբ՝ հիմնելով Վարազի վարժարանը և տպագրելով «Արծվի Վասպորական» պարբերականը: Նրա Տարոն զայր մեծ աշխուժություն առաջ բերեց պոլսարան հայրենանակը ու լուսամիտ մուավորականության շրջանում: Ինուս 50-ական թվականներին Կ. Պոլսի կատարած այցելությունների ժամանակ Խորիմյանը նրանց հետ քննարկում էր գավառահայությունը լուսավորելու հարցը՝ դրան տպարվ համազգային կարևորություն: Պոլսարան մտավորականները հուսեր էին փայփայում, որ Մ. Խորիմյանի շնորհիվ Տարոն աշխարհը կթոթափի «տղիտության խավարը», ուստի նրան զորակցելու և նրա ազգօգուտ ձեռնարկումներին պաշտպան կանգնելու կոչեր էին արվում: Հ. Ավանյանի «Մեղու»-ն գրում էր: «Ազգանք հայեր, վերցուցեք աշքերմիդ և նաևնցեք անզամ մը Հայաստանի մեջ բնակող ձեր խեղճ արենակցացը վլա և ոյինեցեք զանոնք տղիտության գործեն հանելու, եթե անձամբ կարող չեք հոն ուսումնաքը զարգացնելու, զեթ ձեռնոտու եղիք այն Ազգանք և քրտնաշան վարդապետին, որ... իր գրադիտական աշխատությունը կբազմա-

<sup>4</sup> Նույն տեղ, հունիս 26:

<sup>5</sup> «Արծվի Տարոն», 1863 թ., թիվ 12, էջ 47:

պատկե ի սեր Հայրենյաց և Վարազա Արծիվեմ Արծվիկ մը առնեղով Տարոն աշտամակին վու կդմէն նույն զավառն ալ լուսավորելու»<sup>6</sup>:

Վարագում իրեն աշակերտած Գարեգին Սրբանձույանցի աշակցությամբ Խրիմյանը Ս. Կարապետ վանքում հիմնում է Առ Ժառանգավորաց ՎարժարաՅ՝ կարգելով նրան Վարժարամի տնօրեն, իսկ 1863 թ. հրատարակում է «Արծվիկ Տարոն» երկշարաթերթը, որի խմբագրությունը ևս հանձնվում է Գարեգին Սրբանձույանցին: Վարժարամին առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում: «Նա այսօր, գրում էր Գ. Սրբանձույանցը, կզորե եթե հարկ լինի, ամեն կերպ վիշտ ու արկածք, միայն թե պիստ բռնե Ժառանգավորաց Վարժարան. այսպես սկսավ ի Վարազ, այսպես և ի Սուրբ Կարապետ: Մեր գիտցածով նա յուր կոչման և պարտավորությանց կարգին՝ մեծ քան զառաջնորդություն, մեծ քան զվաճահայրություն կճանչն Ժառանգավորաց Վարժարամի տեսչություն. Ժառանգավորներ կխնամն, հասուցնեն, որոնցմով պիտի Կարող լինի թե՛ վանքերուն և թե՛ ժողովրդյան մեջ բարեկարգություն և լուսավորություն սփոռե հաստատել»<sup>7</sup>:

Մ. Խրիմյանը, բացի Սրբանձույանցից, վաճք էր թերեւ նաև իր ձեռքի տակ Վարագում «ուսած և դաստիարակված» ուրիշ ուսուցիչների: Ուսուցիչների թվի ավելացումը հնարավորություն է տալիս, որպեսզի «յուրաքանչյուր ուսուցիչ իր մասնացուղ ունենա», իսկ սա նպաստում է առարկաների ուսուցման դրվագի բարեկավմանը: Այս շրջանում Վարժարանում ուսուցանվել են կրոն, Բայոց լեզու (Ա. Այտովյանի քերականության գրքով), Փրանքերեն, Թուրքերեն, Բայոց պատմություն, աշխարհագրություն, թվարանություն, բարյականություն, քաղաքավարության կառանձեր, երաժշտություն: Աշակերտներին սովորեցնում էին գրաբարից կատարել թարգմանություններ, վերլուծել Եղիշեին ու Եզնիկին, ուսանավորները փոխադրել արձակի և հակառակը, մեկնարամել Ս. Գորի գրուցները, գրել շարտարություններ: Եվ այդ բոլորը «յուրուսուց» մեթոդների, «աշակերտին ուշադրությունը միշտ սևունուն պահեղու» միջոցով: Ուսումնական ասապարեզում կատարված բարեկոյսումները տալիս են ցանկալի արդյունք, և, ինչպես վկայում է Գ. Սրբանձույանցը, «աշակերտը իրենց խնամակալին և ուսուցչաց շանից համեմատ լավ առաջադիմություն և գեղեցիկ հույսեր ցուց կուտան»<sup>8</sup>:

Խրիմյանի նախաձեռնությամբ աշակերտները, ըստ իրենց կարողության և գիտելիքների, բաժանվում են Կարգերի, պահերն՝ դաստիարակների: Բարեկավում են ուսման, քնի, դասապատրաստման պայմանները, աշակերտներին կանոնավոր սնունդ է տրվում, մտցվում է միասնական աշակերտական համազգեստ: Ուշադրություն է դարձվում նաև հանդեսների, զանազան միջոցառումների կազմակերպմանը, որոնք դաստիարակչական նշանակություն ունեն: «Արծվիկ Տարոն» թերթի 1863 թ. հունիսի 1-ի համարում նկարագրվում է Ազգային Սահմանադրության տարեղարձի առժիկ կազմակերպված դպրոցական հանդեսը, որին, բացի

<sup>6</sup> «Մեղու», 1863 թ., թիվ 196, էջ 108:

<sup>7</sup> «Արծվիկ Տարոն», 1863 թ., թիվ 12, էջ 48:

<sup>8</sup> Նույն տեղ:

աշակերտներից և ուսուցիչներից, ներկա էին նաև Նոր Նախիչևանից եկած հյուրեր՝ ուսուավորներ:

Խրիմյանը փորձում է բարեկավել վանքի ու վարժարանի ֆինանսական վիճակը, և այդ նպատակով ստեղծվում է «տնտեսական խորհուրդ»՝ վերաբնկողություն ստեմանեղով վանքի եկամուտների վրա:

Խրականացվող բարեկոխոսները զգալիորեն բարեկավեցին վարժարանի վիճակը՝ փառք թերելով և՝ Խրիմյանին, որին Տարոնի ազգարնակությունը շնորհեց «Հայրիկ» պատվանուն, և՝ միաժամանակ բարձրացրին կրթօջախի հեղինակությունը: Կրթության սերն ավելի տարածվեց Տարոն աշխարհում, և շատերը ցանկանում էին, որ «իրենց որդիի կարդան ամենը ալ կուգեն, որ ի Սուրբ Կարապետ թերել կարդալ տան»<sup>9</sup>: Փաստորեն, Խրիմյանի տեսչության տարիներին Ս. Կարապետ վանքի ժառանգավորաց վարժարանը դարձել էր տարածաշրջանի ամենից հեղինակավոր կրթօջախը: Օարունակելով դեռևս Վարագում սկսված հայրենակարգական, լուսավորական նախաձեռնությունները՝ վարժարանի վարիչները ձգում էին կրթական շարժումը տարածել նաև Տարոնի գյուղերում, քացել դպրոցներ, իսկ վարժարանն էլ պետք է՝ «վարապետներ և վարդապետներ» պատրաստեր այդ դպրոցների համար: Լուսավորական շարժման այս ծրագիրը և նրա իրականացման ուղղությամբ Խրիմյանի ու նրա գինակիցների շանքերը զգալի արդյունք տվեցին, քանզի Ս. Կարապետ կրթօջախը, ինչպես իր օրոք, այնպես էլ հետագայում, ուսուցիչներ էր պատրաստում շրջակա գյուղերի դպրոցների համար՝ ձեռք թերելով Տարոնում մայր վարժարանի հոչակ:

Հետագայում Խրիմյանի գործունեության և վարժարանի խաղացած դերի մասին վանքի վաճառայր Վարդան վարդապետ Հակոբյանը գրում էր. «Այս մենաստանը ամենն ավելի փայլեցավ արդի Վեհափառ Ս. Հայրապետի (Խրիմյանի - Վ. Կ.) վաճառայրության օրերուն մեջ, հորում տպարանն ու վարժարանը, երկուրեն և ծաղկած՝ մտավորական լույս կափոնին անուս ժողովրդին և կարճ միջոցի մեջ ընտիր աշակերտներ դուրս եկան, որոնք իրեն վարդապետ, քահանա և ուսուցիչ օգտակար ծառայություններ կատարեցին ժողովրդի զարգացման և դաստիարակության սուրբ գործին մեջ»<sup>10</sup>: 70-ական թվականների սկզբին վանքի դպրոցն ավարտուների շարքում էին Բուլանջիսից Լևոն Մաքսուտյանը, խնուացիներ Արսենը, Խորենը, Սարգիսը, Բաղդասարը և ուրիշներ. «Ասոնք կորկվին իրենց գյուղերը, որոնց մեծագույն մասը վարժապետության կեռչվին»:

1869 թ. Ա. Խրիմյանն ընտրվում է Կ. Պոլսի Պատրիարք, իսկ Գ. Արվանձոյանցը կարգվում վանքի փոխանորդ՝ Խրիմյանից հանձնարարություն ստանալով հատկապես մեծ խնամք տանել վարժարանի եկամուտամբ: Նորընտիր Պատրիարքը

<sup>9</sup> Նույն տեղ, 1865 թ., թիվ 42, էջ 71:

<sup>10</sup> «Արարատ», 1903 թ., թիվ 4, էջ 333:

խոստանում է օգմել վարժարանին և Կ. Պոլիս հասնելով՝ դասագրքեր է ուղարկում Ս. Կարապետ:

Գ. Սրբանձտյանցի, ինչպես նաև 1873 թ. վաճքի վաճառայի կարգված Մամբրեն Մշեցու օրոք դարձյալ «վաճքն ու Ժառանգավորաց վարժարանը խիստ փայլուն վիճակ մ'ունեն: Նորամուծությունները շարունակվուն էին, և Սրբանձտյանցը որոշում է փոխել դպրոցում աշակերտներ ընդունելու կարգը: Տարիներ շարունակ վարժարան էին ընդունվում հիմնականում տաճուտերերի, հարուստ, երևելի զյուղացիների երեխաներ: Մինչդեռ Տահնազարյանին հանձնարարվում է իշնել դաշտի զյուղերը և ընտրել «տեղացի աղքատ, բայց ամենեն ուշիմ և ընդունակ տղաքները»: Աշակերտներ պետք է ընտրվեին հատկապես «այն զյուղերեն, որոնցմեն աշակերտներ չեին զտնված վաճական վարժարանի մեջ»<sup>11</sup>: Այս վերջին պայմանը բացատրվում էր գավառի տարբեր զյուղերում դպրոցներ բացելու և դրանք ուսուցիչներով պահովելու մտահոգությամբ, քանզի շրջանավարտները, վերադառնալով հարազատ զյուղեր, կնպաստեին հայ մանուկների կրթության ու դաստիարակությանը: Գ. Սրբանձտյանցի շանքերով ստեղծվում է նաև զրադարձ, որ հավաքվում են վաճքում եղած ձեռագիր մատյաններն ու տպագիր գրքերը:

Մամբրեն Մշեցու օրոք ձեռնարկվում է վարժարանի նոր շենքի շինարարությունը: Կառուցվում է, սակայն, միայն շենքի առաջին հարկը, քանի որ 1877-78 թթ. ուսությունը բարեկան պատերազմը, ֆինանսական միջոցների բացակայությունը հնարավորություն չեն ընձեռու ո՞չ Մամբրեն Սրբազնանին և ո՞չ էլ հետագա վաճառայիրին ավարտելու այն: Պատերազմը և դրա հետևանքով երկրում սաստկացած անկարգություններն ու անշշխանությունը բացասաբար են անդրադառնում վաճքի և վարժարանի գործունեության վրա:

Հետագա տարիներին վարժարանի վիճակը կրկին բարեկավվում է. վարժարանում դասավանդում են նոր ուսուցիչներ, ինչպես, օրինակ, Սրբանձտյանցի աշակերտներից Ղևոնդ քահանան, որի «դասերն ալ մատչելի էին ինքնածին մեթոսուներով. աշակերտները կարեն, և անոնք զինքը սրտանց կիարգեին, որովհետև նոր մը անան զրովով կվերաբերվեր ամենուն հետ»<sup>12</sup>: 1881 թ. Կ. Պոլսից վաճք է հրավիրվում Հ. Զոլայանը և ստանձնում վարժարանի տնօրենի պաշտոնը: Կատարվում են մի շարք նորամուծություններ, որոնցից մեկն էլ ծեծի, ֆալախայի վերացումն էր: Վարժարանի բարվոր վիճակը շարունակվում է նաև Գ. Սրբանձտյանցի կրկին Տարոն գալուց հետո (1888 թ.), երբ նա ստանձնում է Ս. Կարապետ վաճքի վաճառայիրությունը և Տարոնի վիճակավոր առաջնորդի պաշտոնը: Հետագա տարիներին և հատկապես 90-ական թվականներին, սակայն, մոլեզմող համիլյան կոտորածները խիստ դժվարացնում են վարժարանի գործունեությունը: Դարա-

<sup>11</sup> «Արևելք», 1902 թ., սեպտեմբեր 6:

<sup>12</sup> Նույն տեղ:

վերջին վաճառքայրական փոխանորդ Վարդան Վարդապետը փորձում է բարելավել կրթօջախի աշխատանքը, ավելացնել աշակերտների թիվը: 1898-1900 թվականներին այստեղ երածշտություն է դասավանդում համապար Արմենակ Օսմանուրադը: Սակայն վաճքը միջոցների պակաս ուներ, և աս էր, որ Վարդան Վարդապետին հարկադրում է ժամանակի մամլում («Արարատ», «Լումա») տպագրելու վաճքի և վարժարանի ծանր վիճակը ներկայացնող նամակներ, որոնցում հայ հասարակությանը կոչ էր արվում օգնել ավարտին հասցնելու դեռևս 70-ական թվականներին սկսված դպրոցի շենքի շինարարությունը:

Այսպիսով, Մշո Ս. Կարապետ վաճքի վարժարանը 19-րդ դարում և մանավանդ 60-80-ական թվականներին զգալի առաջընթաց էր ապրել՝ դառնալով Տարոն աշխարհի և շրջակայի կրթական, լուսավորական կյանքի կենտրոնը: Նրա կամարների տակ կրթություն և ազգային դաստիարակություն էին ստանում բազմաթիվ հայ պատասխներ, որոնք այնուհետև իրենց գործունեությամբ նպաստում էին զավարի մշակութային, կրթական կյանքի ընդհանուր վերելքին: Ս. Կարապետի օրինակը մշամամանակ ցուց է տալիս, որ 19-րդ դարում, եթե արդեն հայ իրականության մեջ գործում էին համբավավոր աշխարհիկ ուսումնական հաստատություններ, վաճքերին կից դպրոցները չէին կորցրել իրենց դերն ու նշանակությունը և շարունակում էին իրենց նպաստը թերել հայ երեխաների կրթության և դաստիարակության գործին: Ցավոր, Ս. Կարապետի վաճքը բարձրաբար ավելվեց 1915 թ. Եղեռնի տարիներին և բնականարար դադարեց գործել նաև դպրոցը, որը լուսավոր մետք է թողել հայ հոգևոր-մշակութային կյանքի բազմադարյան պատմության մեջ:

